# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

## ՈՐՈՇՈՒՄ

*« 02» դեկտեմբերի 2013 թվականի N 15 – Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2013 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի եկամտային մասում եկամուտները ավելացնել 886.95 հազար դրամ, այդ թվում՝ նպատակային հատկացումներ /սուբվենցիա/ 886.95 հազար դրամ:
2. Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

11.1.2 «Պահուստային ֆոնդ» ծրագրի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 600.0 հազար դրամ, այն ուղղելով՝

4.2.1 « Գյուղատնտեսություն » ծրագրի 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածին՝ 50.0 հազար դրամ,

1.6.1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» ծրագրի 4241/մասնագիտական/ ծառայություններ/ հոդվածին՝ 50.0 հազար դրամ,

10.7.1 «Սոց.հատուկ արտոնություններ» ծրագրի 4726 /հուղարկավորության նպաստ/ հոդվածին ՝ 500.0 հազար դրամ:

1.1.1 « Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածին ավելացնել 153.4 հազար դրամ, 4212 /էներգետիկ ծառայություններ/հոդվածին 120.0 հազար դրամ:

8.2.3 « Մշակույթի տուն» ծրագրի 4212 /էներգետիկ ծառայություններ/հոդվածին ավելացնել 123.0 հազար դրամ, 4111 /աշխատավարձ/ հոդվածից պակասեցնել 17.0 հազար դրամ:

8.2.1 «Գրադարան» ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածին ավելացնել 14.3 հազար դրամ:

5.1.1 « Աղբահանում » ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածին ավելացնել 114.3 հազար դրամ:

1.6.1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» ծրագրի 4111/աշխատավարձ/ հոդվածից պակասեցնել 3.8 հազար դրամ:

6.4.1 «Փողոցների լուսավորություն» ծրագրի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին ավելացնել 120.0 հազար դրամ:

9.1.1 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի 4511 /սուբվենցիա/ հոդվածին ավելացնել 298.6 հազար դրամ, որից աշխատավարձին՝ 118.6 հազար դրամ, էներգետիկ ծառայություններին ՝ 180.0 հազար դրամ:

9.5.1 «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի 4511/սուբվենցիա/ հոդվածից պակասեցնել՝ 35.85 հազար դրամ՝ աշխատավարձից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՌԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ...ԱՍՏ ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

« 02» դեկտեմբերի 2013 թվականի N 16-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻ Ն ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2014 թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.

բդ/ 3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000 դրամ.

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

*գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.*

*դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:*

*1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

*ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.*

*բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.*

*գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:*

*1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:*

*1.4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝*

*ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններին ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.*

*բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:*

*1.5. Համայնքի տարածքում՝*

*ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.*

*բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ,*

*գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ,*

*գա/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝*

*-հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 դրամ,*

*-ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ:*

*1.6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

*ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,*

*բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ,*

*գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝200 000 դրամ,*

*դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,*

*ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,*

*զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:*

*1.7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝*

*ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.*

*բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.*

*գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,*

*դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:*

*1.8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 1000 դրամ.*

*1.9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:*

*1.10 Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:*

*2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2014 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.*

*2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:*

*2.2. Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:*

*2.3. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:*

*2.4. Գյուղապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:*

*2.5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար գյուղապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.*

*ա/ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,*

*բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ԱՄՏ ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

# ՈՐՈՇՈՒՄ

*« 02» դեկտեմբերի 2013 թվականի N 17-Ն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻ Ն ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի սեփականություն համարվող տրանսպորտային միջոցը գյուղապետարանի ՝ ՎԱԶ -2107 մակնիշի ծառայողական ավտոմեքենան օտարել աճուրդային կարգով:
2. Ավտոմեքենայի աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը հաստատել 215000 /երկու հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ / հիմք՝ «Արա-Արտ Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2013 թվականի նոյեմբերի 25-ին կազմված գույքի գնահատման ակտ/:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 02» դեկտեմբերի 2013 թվականի N 18-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2014 թվականին սահմանել 230000 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ԿԱԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

## ՈՐՈՇՈՒՄ

*« 02» դեկտեմբերի 2013 թվականի N 19-Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 18 –Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և « Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդի գյուղապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը , հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1, N 2, N 3 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի « Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդի գյուղապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները աշխատակիցների թվաքանակը , հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 18 -Ն որոշումը:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել կրճատված հաստիքները զբաղեցնող անձանց աշխատանքից ազատման և վերջնահաշվարկի վճարման հարցերը:

# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԱԾՈՏ ԱՐԾԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ



Հավելված N 1
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
02. 12. 2013 թվականի N 19- Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 30

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 180000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 110000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 96000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 184000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ /2.3-2/ | 2 | 175000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ /3.1-2/ /3.1-3/ | 3 | 120000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ /3.2-2/ | 2 | 110000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ /3.3-2/ | 2 | 100000 |

| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
|---|---|---|
| Գործավար | 1 | 100000 |
| Վարորդ | 1 | 86000 |
| Պահակ | 1 | 60000 |
| Հավաքարար | 1 | 60000 |
| Հարկահավաք | 1 | 90000 |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 100000 |
| Գեղմասվար | 1 | 80000 |
| Հավաքարար | 1 | 60000 |
| Բանվոր | 1 | 60000 |

## ԳՐԱԴԱՐԱՆ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 70000 |

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/գյուղապետարանի պայմանագրային աշխատողներ/

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 230000 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 2 | 110000 |
| Բանվոր | 3 | 60000 |
| Վարորդ | 1 | 60000 |
| | | |

Աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյան

Հավելված N 2

Նոր Խարբերդ համայնքի ավագանու

02. 12. 2013 թվականի N 19- Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 145000 |
| Դաստիարակ | 3,75 | 360000 |
| Դաստիարակի օգնական | 3,3 | 210000 |
| Երաժշտության դաստիարակ | 0,75 | 72000 |
| Բուժ.քույր | 1 | 70000 |
| Գործավար | 0,5 | 60000 |
| Հաշվապահ | 0,5 | 70000 |
| Տնտեսվար | 0,5 | 60000 |
| Խոհարար / խոհարարի օգնական | 1,5 | 105000 |
| Լվացարար | 1 | 65000 |
| Պահակ | 3 | 180000 |
| Օժանդակ բանվոր / դներձակ/ | 1 | 65000 |
| | | |

Աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյան

Հավելված N 3

Նոր Խարբերդ համայնքի ավագանու

02. 12. 2013 թվականի N 19- Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 90000 |
| Ուսմասվար | 1 | 62000 |
| Երաժշտության ուսուցիչ | 14/ 347,5 ժամ | 1012670 |
| Հաշվապահ | 1 | 80000 |
| Հավաքարար | 1 | 60000 |
| | | |

**Աշխատակազմի քարտուղար** **Գ. Աբրահամյան**